ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11.02.2019թ.

ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ ԳԱՊ գնահատման պատասխանատու

Խաչիկ Կարապետյան – Հանձնաժողովի նախագահի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ ԳԱ-գնահատող անձնակազմ

Նանե Քալաշյան - Հանձնաժողովի վերահսկողության վարչության ստուգումների բաժնի առաջատար մասնագետ,

Հայկ Սարգսյան - Հանձնաժողովի վերլուծության և մրցակցության գնահատման վարչության 2-րդ բաժնի առաջատար մասնագետ,

Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ ԲԱ-բացող անձնակազմ

Գարիկ Մկրտչյան - Հանձնաժողովի պարետ,

Թոմաս Զուլալյան – Հանձնաժողովի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող-համակարգչային ցանցի ադմինիստրատոր,

Հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ ՄՀՄ

Տիգրան Սաֆարյան – Հանձնաժողովի վերլուծության և մրցակցության գնահատման վարչության 2-րդ բաժնի առաջատար մասնագետ:

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության վերաբերյալ

(Խ. Կարապետյան)

1. Ընդունել ի գիտություն, որ՝

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ մասով՝ հարցում էր ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի և մասնակիցների հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 2019 թվականի փետրվարի 11-ին ներկայացվել է եզրակացություն՝ համաձայն, որի 1-ին տեղ զբաղեցրած ԱՁ Տիգրան Սամվելյան Արմենակի-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (04.02.2019թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն:

1.1 ԱՁ Տիգրան Սամվելյան Արմենակի-ն՝ «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 05.02.2019թ.-ի թիվ 2 որոշմամբ ճանաչվել էր առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

1.2 Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված դրական եզրակացությունը «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրաց մասնակցին առաջարկել կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____Խ. Կարապետյան

Անդամներ՝ _____Հ. Սարգսյան

_____Թ. Զուլալյան

_____Գ. Մկրտչյան

_____Ն. Քալաշյան

Քարտուղար՝ _____Տ. Սաֆարյան